# Դաս 21. Քրիստոնեական արժեհամակարգ

Լրացուցիչ նյութ

## Խաչակնքում

*Խաչակնքելիս երեք մատը (բթամատը, ցուցամատն ու միջնամատը) միացնում ենք իրար, որ խորհրդանշում է Սուրբ Երրորդությունը: Մյուս երկու մատները (ճկույթն ու մատնեմատը) միասին սեղմում ենք ափին, որ խորհրդանշում է Քրիստոսի կատարյալ Աստված և կատարյալ մարդ լինելը և այդ երկուսը որպես մեկ միավորյալ բնություն լինելը (մատները սեղմված են իրար):*

*Ճակատը դրոշմելով՝ խորհրդանշում ենք կյանքը, ձեռքն իջեցնելով կրծքին՝ մահը, կրծքի ձախ կողմը դնելով՝ այս աշխարհի կյանքը, և կրծքի աջ կողմը՝ հանդերձյալ կյանքը: Խաչակնքելիս դրոշմում ենք մեր ճակատը՝ հիշելով, որ երկնքում էինք, և ապա ձեռքն իջեցնում ենք դեպի սիրտը՝ մտաբերելով, որ երկիր ընկանք, երբ ձեռքը տանում ենք կրծքի ձախ կողմը, նշում ենք, որ ձախակողմյան (մեղավորների դասում) եղանք, ապա տանում աջ՝ հաստատելով, որ արդարների դասում ենք ցանկանում լինել …*